ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒՆ ՎԵՐԵԼՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ասորեստանյան պետության շուրջ չորսդարյա (մ. թ. ա. XIII դարի կեսերից մինչև IX դարի կեսերը) անընդմեջ ռազմական բախումները Նաիրի-ուրարտական ցեղերի ու ցեղային միությունների հետ աստիճանաբար ավելի ու ավելի ծանր կացության մեջ էին դրել վերջիններիս և հետզհետե ջլատել նրանց ուժերը։ Նաիրի-ուրարտական ցեղային միությունները ի վիճակի չէին կանխելու Հին Արևելքի այն ժամանակվա հզորագույն պետության՝ Ասորեստանի հուժկու ռազմական արշավանքները, որի պատճառով էլ ասորեստանյան բանակները բազմիցս հաղթաբար անցնում էին Նաիրի-ուրարտական ցեղերի լայնատարած տերիտորիայով՝ սկսած Տիգրիսի վերին հոսանքներից մինչև Ճորոխի ավազանը, հրի ու սրի մատնում տեղական բնակչությանը, ուժից վեր հարկեր ու տուրքեր նշանակում նրանց վրա և հարուստ ու բազմապիսի ավարով վերադառնում Ասորեստան։ Քաղաքական այդպիսի բարդ իրադրության պայմաններում, երբ կամա-ակամա դրված էր Նաիրի-ուրարտական ցեղային միությունների լինել-չլինելու հարցը, վերջիններս ստիպված էին տարեցտարի է՛լ ավելի միավորվելու՝ միացյալ ուժերով արժանի հակահարված տալու ահեղ հակառակորդին։

Այդպիսի միավորման ձգտումները հարյուրամյակների ընթացքում ավելի ու ավելի են համախմբում Նաիրի-ուրարտական ցեղերին ու ցեղային միություններին՝ ընդհանուր ճակատ կազմելու Ասորեստանի անընդմեջ ու համառ ռազմական էքսպանսիայի դեմ և, ի վերջո, մ. թ. ա. IX դարի կեսերին վերջնականապես ավարտվում է ուրարտական պետության կազմավորման երկարատև պրոցեսը։ Նորաստեղծ պետության թագավորանիստ քաղաքը (մայրաքաղաքը) դառնում է Արզաշկուն[1]*, իսկ թագավորը՝ Արամեն (Արամուն)։*

Այսպիսով, մ. թ. ա. IX դարի կեսերից ուրարտական թագավոր Արամեն սկսում է կռել իր պետության հզորությունը և արժանի հակահարվածներով բազմիցս անախորժություններ պատճառում ասորեստանյան թագավոր Սալմանասար III-ին։ Արամեի ժամանակ աստիճանաբար ամրանում է Ուրարտուի հզորությունը, իսկ նրա հաջորդի՝ Սարդուրի I-ի օրոք սկսվում է Հին-արևելյան այդ պետության երկարատև վերելքը։

---

[1] *Ուրարտուի Արզաշկու(ն) թագավորանիստ քաղաքի տեղը դեռևս հաստատված չէ։ Կարելի է ենթադրել, որ այն ընկած է եղել Վանա լճի հյուսիսային ափերից ոչ հեռու, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ասորեստանյան թագավոր Սալմանասար III-ի արձանագրությունների համաձայն Արզաշկուն ընկած է եղել կա՛մ Դայաենիի (ուրարտական Դիաուխի. հայկ. Տայք) և Էրիտիա լեռան ու Արմարիլիի (հայկ. Վասպուրական՝ Վանա և Ուրմիա լճերի միջև), կա՛մ Դայաենիի, Տումմեի ու Գիլզանի (Ուրմիա լճի արևմտյան ափին), կա՛մ Դայաենիի, Սուխմեի ու Գիլզանի, կա՛մ էլ սոսկ Դայաենիի ու Գիլզանի միջև։ Այդ փաստերը տեղ են գտել հետևյալ աղբյուրներում*—И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту *(այսուհետև՝* АВИИУ*);* „Вестник древней истории“ *(այսուհետև՝* ВДИ*), 1951, № 2, 3, 4, արձանագրություններ 27 (*II*, 45), 28 (35), 29, 31, 32։*

* * *

Նաիրի-ուրարտական ցեղերի ու ցեղային միությունների կամ ուրարտական պետության կազմավորման շրջանի պատմությունը, ինչպես հայտնի է, լուսաբանված է սոսկ ասորեստանյան սեպագիր աղբյուրներում, քանի որ այդ ժամանակ Ուրարտուն գեռևս չէր ստեղծել իր սեփական գիրը։ Սակայն սկսած Սարգուրի I-ի (մ. թ. ա. IX դարի երեսնական թվականներ) թագավորության ժամանակվանից Ուրարտուի պատմության վերաբերյալ մեզ անհրաժեշտ տվյալներ են հասել նաև ուրարտական թագավորների թողած արձանագրություններից։ Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռում արդեն հնարավոր չափով խուսափելու ասորեստանյան աղբյուրների միակողմանի տվյալներից և Ուրարտուի, ինչպես նաև ուրարտա-ասորեստանյան քաղաքական միջադեպերի պատմությունն ուսումնասիրելու շատ ավելի ճշմարտացի ու բազմակողմանի։

Սարգուրի I-ի քաղաքական գործունեության մասին, դժբախտաբար, աննշան տեղեկություններ են հասել մեզ։ Ասորեստանյան լեզվով կազմած նրա թվով երեք նույնանման արձանագրություններում առանձնապես հետաքրքիր է արքայական տիտղոսաշարը, որում Սարգուրին հռչակում է իրեն «թագավոր մեծ, թագավոր հզոր, թագավոր տիեզերքի, թագավոր Նաիրի երկրի, հավասարը չունեցող թագավոր, ճակատամարտից չվախեցող զարմանալի հովվապետ, անհպատակներին հպատակեցնող», իսկ շարունակության մեջ՝ «թագավոր թագավորաց, որը հարկ է ստացել բոլոր թագավորներից»[2]։

Սարգուրի I-ի արձանագրությունները, դժբախտաբար, կոնկրետ տվյալներ չեն պարունակում նրա ռազմական նվաճումների վերաբերյալ, ուստի նրանց հիման վրա հնարավոր չէ հստակ եզրակացությունների հանգել Ուրարտուի ռազմական պոտենցիալի և հզորության աստիճանի մասին։ Սակայն արձանագրությունների հենց տիտղոսաշարը, ինչքան էլ որ վերապահությամբ մոտենանք նրան, հաշվի առնելով հին-արևելյան ու հատկապես ասորեստանյան արքաների (որոնցից ընդօրինակված է Սարգուրիի տիտղոսաշարը) պարծենկոտությունը և նրանց արտահայտությունների վերամբարձ ոճը, անշուշտ վկայում է, որ Սարգուրին արդեն գերիշխում էր բազմաթիվ ցեղապետների և մարզերի կառավարիչների վրա, որոնք նախքան ուրարտական պետության կազմավորումը եղել են ինքնուրույն իշխողներ՝ «թագավորներ», իսկ այժմ արդեն ենթարկվում էին ուրարտական թագավորին, որի շնորհիվ էլ վերջինս ձեռք էր բերել «մեծ», «հզոր», «տիեզերքի» թագավորի, «թագավորի, որին հավասարը չկա» և, մանավանդ, «թագավորաց թագավորի» տիտղոսը։

Վերոհիշյալ եզրակացությունը, իհարկե, ունի որոշակի պատմական հիմք։ Այդ մասին վկայում են հենց Սարգուրի I-ի ժամանակակցի՝ ասորեստանյան թագավոր Սալմանասար III-ի արձանագրությունները։ Բավական է նշել, որ ասորեստանյան թագավորին սոսկ մի անգամ է հաջողվում, այն էլ սկզբնական շրջանում, այս կամ այն չափով ներթափանցել Ուրարտուի արևմտյան երկրամասերը։ Սա արդեն ամենևին նման չէ այն սրընթաց և հաղթական արշավանքներին, որոնք ձեռնարկվում էին ասորեստանյան այս թագավորի

[2] Corpus Inscriptionum Chaldicarum, Berlin und Leipzig (այսուհետև՝ CICh), I (1928), II (1935), 1—2, տող 1—5։ Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (այսուհետև՝ УКН), 1—2, տող 1—5։

կողմից Սարդուրի I-ի նախորդի՝ Արամեի դեմ։ Սալմանասար III-ի զորահրամանատարի՝ Դայան-Աշշուրի մ. թ. ա. 832 թ. ձեռնարկած արշավանքի ծայրագույն կետը լինում է սոսկ Արածանիի ստորին հոսանքի շրջանը, երբ նա կտրում է Արևմտյան Տիգրիսի ակունքներից հարավ ընկած Բիտ-Զամանի երկիրը և, այնուհետև, անցնում Արածանին, ըստ որում Դայան-Աշշուրը անմիջապես դիմադրության է հանդիպում Սարդուրի I-ի կողմից։ Այդ մասին ակնարկում է հենց ինքը՝ ասորեստանյան թագավորը։

«Սեդուրի[3] ուրարտացին լսելով այդ արշավանքի մասին,— գրում է Սալմանասար III-ը,— հույսը դնում է իր բազմաքանակ զորքի վրա և դուրս գալիս դեմ-հանդիման, որպեսզի ճակատամարտ տա»։ Ճիշտ է, Սալմանասար III-ը հիշատակում է, որ ինքը ընդհարվում է Սարդուրի I-ի հետ և նրան պարտության մատնում՝ «նրա զինվորների դիակներով լցնելով ընդարձակ տափաստանը»[4], սակայն ասորեստանյան թագավորի այս խոսքերից, որոնք չափազանց չոր ու ժլատ են, համեմատած այլ հաղթանակների փառաբանումների հետ, ինչպես նաև այն փաստից, որ նա այլևս ոչինչ չի ասում ուրարտական ուրիշ տերիտորիաների նվաճման, ավարառության և այլնի մասին, երևում է, որ Սալմանասարի այս արշավանքը առնվազն լիարժեք հաջողություններ չի հանգեցրել Ասորեստանին։ Պատահական չէ, որ Սալմանասար III-ը ինքը խոստովանում է Սարդուրի I-ի զորքերի բազմաքանակությունը և ճակատամարտը ընդունելու նրա անսասան կամքը։

Հետագայում Ասորեստանը երեք տարի ձեռք չի բարձրացնում Ուրարտուի վրա, իսկ այնուհետև, մ. թ. ա. 829 թ., ասորեստանյան բանակը սոսկ բավարարվում է Վանա լճից դեպի հարավ ընկած Խուբուշկիայի[5] ասպատակությամբ, ուր նրա թագավոր Դատանայից հարկ է ստանում[6]։ Հատկանշական է, որ Սալմանասար III-ի զորահրամանատար Դայան-Աշշուրը չի համարձակվում այլևս մտնելու Ուրարտուի տերիտորիայի խորքերը, ուստի վերադառնում է դեպի հարավ-արևելք՝ Ուրմիա լճից հարավ ընկած երկրները (Մանա, Պարսուա)։ Դայան-Աշշուրը նույնիսկ չի էլ նշում որևէ ճակատամարտի մասին։ Շատ հավանական է, որ նա չի էլ եղել առանց այն էլ ոչ մեծ Խուբուշկիա երկրի ամբողջ տերիտորիայում, քանի որ արձանագրության մեջ սոսկ հիշատակվում է, որ ասորեստանյան զորահրամանատարը անցել է Զաբ գետը[7] և հասել մինչև Խուբուշկիայի բնակատեղիները։ Ամենից հավանականն այն է, որ Սալմանասար III-ի զորահրամանատարը հենց Խուբուշկիայի հարավային բնակատեղիներում լուրջ դիմադրության է հանդիպել ուրարտական զորքերի կողմից և այդ պատճառով էլ փաստորեն ստիպված է եղել նահանջելու։

Վերոհիշյալ կարծիքը հիմնավորվում է այն փաստով, որ Սալմանասար III-ը իր թագավորության 32-րդ տարում (մ. թ. ա. 827 թ.) դարձյալ փորձ-

---

3 Այստեղ Սալմանասար III-ը նկատի ունի Սարդուրի I-ին։

4 D. D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, I—II, Chicago, 1926—1927 (այսուհետև՝ ARAB), I, § 584. АВННУ, 28 (141).

5 Խուբուշկիան տեղադրվում է Վանա լճից հարավ, Բոհտանի (Արևելյան Տիգրիսի) հովտում, նրա աջափնյա հատվածում։

6 ARAB, I, § 587. АВННУ, 28 (159). Ասորեստանյան աղբյուրների Դատան կամ Դատանան համապատասխանում է Խորխորյան տարեգրության Դաղային կամ Դաղիին։ Տե՛ս N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, էջ 89։

7 Խոսքը, անկասկած, վերաբերում է Մեծ կամ Վերին Զաբին՝ Տիգրիսի վտակին։

է անում Խուբուշկիա ուղարկելու Դայան-Աշշուրին, որը, արձանագրության տվյալների համաձայն, սոսկ մոտենում է այդ երկրի բնակատեղիներին և հարկ ստանում նրա թագավոր Դատայից։ Ը դեպ, այս դեպքում ևս, ինչպես նախորդ տարում, ասորեստանյան զորքը նահանջում է դեպի հարավ, ուր նա նախ նվաճում է Մուսասիրի Ծապարիա ամրացված քաղաքը՝ 46 այլ բնակատեղիների հետ միասին, հասնում ուրարտակոն մոտակա ամրոցների, ավերում ու հրկիզում թվով 50 բնակատեղիներ և այնուհետև ընթանում դեպի հյուսիս-արևելք՝ Ուրմիա լճի արևմտյան ափերը, ուր հարկ է ստանում Գիլզանի թագավոր Ուպուից[8]։

Այսպիսով, ակնառու կերպով երևում է, որ Սարդուրի I-ի տիրապետության ժամանակաշրջանում արդեն սկսվում է Ուրարտուի վերելքը, որն արտահայտվում է ամենից առաջ նրա ռազմական հզորությամբ։ Սարդուրի I-ի տիրապետության վերջին տարիներին Ասորեստանը այլևս այն աստիճանի սարսափելի հակառակորդ չէր Ուրարտուի համար, ինչպիսին նա եղել էր Արամեի ժամանակ։ Ընդհակառակը, ինքը Ուրարտուն տարեցտարի ավելի ու ավելի հզոր ախոյան էր դառնում Հին Արևելքի այն ժամանակվա այդ հզոր պետության՝ Ասորեստանի համար։ Այդ երևում է թերևս այն փաստից, որ Սարդուրի I-ի թագավորության մայրամուտին ասորեստանյան արքան սոսկ երկու անգամ է աննշան արշավանքներ ձեռնարկում Ուրարտուի դեմ, որի ընթացքում նրան հաղիվ հաջողվում է լինել վերջինիս այն ժամանակվա տերիտորիայի հարավային և հարավ-արևելյան ծայրամասի միայն երկու երկրների (Խուբուշկիա, Մուսասիր) որոշ բնակատեղիներում։

Այստեղ անհրաժեշտ է առանձնապես նկատի ունենալ, որ Ասորեստանի մղած շուրջ 100-ամյա անընդմեջ պատերազմները Առաջավոր Ասիայում իր առաջնությունն ապահովելու համար, բնականաբար, իրենց բացասական կնիքը էին դրել երկրի ինչպես տնտեսության, այնպես էլ ռազմական հզորության վրա։ Դրան պետք է ավելացնել Սալմանասար III-ի թագավորության վերջին տարիներին պետության ներսում ծագած խժդժությունները, որոնք պայմանավորված էին թագավորի կողմից ռազմական գործում Դայան-Աշշուրի առաջքաշմամբ։ Այդ առթիվ Սալմանասարի որդիներից մեկի մ. թ. ա. 827 թ. հոր դեմ բարձրացրած ապստամբությունը ընդգրկեց թագավորության նշանակալից մասը։ Երկպառակությունները շարունակվում են ընդհուպ մինչև Սալմանասարի մահը[9]։

Հետևաբար, Սարդուրի I-ի որոշակի հաջողությունները Սալմանասար III-ի հետ ունեցած կատաղի մարտերում պայմանավորված էին ոչ միայն Ուրարտուի ռազմական հզորության աճով, այլև Ասորեստանի արտաքին ու ներքին քաղաքականության նկատելի անհաջողությամբ։

Շատ ավելի սակավ են մեր տեղեկությունները Սարդուրի I-ի ներքին գործունեության մասին։ Հայտնի է, որ նա զգալի շինարարական աշխատանքներ է ձեռնարկել Տուշպայում։ Այդ քաղաքի միջնաբերդի մոտ հսկայական քարերով կառուցված պարսպի արձանագրությունները հաղորդում են. «Ես այս քարերը

---

8 И. М. Дьяконов, АВИИУ, 28 (174).

9 В. В. Струве, История древнего Востока, М., 1941, էջ 305—306։

բերեցի Ալնիունու քաղաքից[10] (և) կանգնեցրի այս պարիսպը»[11]։ Սարդուրիի, Լուտիպրիի որդու կողմից Վանի ժայռի մոտ կառուցված միջնաբերդը և պարիսպը հաստատում են ուրարտական կենտրոնի առկայությունը Տուշպա-Վանի տեղում դեռևս հնագույն ժամանակներից սկսած։ Մյուս կողմից, Սարդուրի I-ի շինարարական գործունեությունն առանձնահատուկ նշանակություն է ստանում, եթե նկատի ունենանք, որ վերոհիշյալ պարսպի քարերը (0,75 մետր բարձրությամբ և մինչև 6 մետր երկարությամբ) միանգամայն տարբերվում են Վանի ու նրա շրջանի մյուս օբյեկտների շինանյութից։ Ուստի նրանց բերովի լինելը, գուցե և հեռավոր վայրից, դառնում է անկասկած, թեև Վանի շրջակայքը, ինչպես հայտնի է, քարի պակաս չունի։ Այդ հանգամանքը վկայում է ոչ միայն այն առանձնահատուկ ուշադրությունը, որը նվիրել է շինարարական օբյեկտներին Սարդուրի I-ը, այլև նրա ժամանակվա ուրարտական պետության հսկայական նյութական հնարավորությունների ապացույցն է։

Այսպիսով, Սարդուրի I-ի ժամանակ իր արտացոլումն է գտել շինարարական այն գործունեության սկզբնական փուլը, որը մեծ թափ ստացավ ու հսկայական ծավալի հասավ ուրարտական հաջորդ թագավորների օրոք։ Այդ գործունեության հերթական փուլին հանդիպում ենք Սարդուրի I-ի որդի Իշպուինի թագավորի ժամանակ։

* * *

Իշպուինիի թագավորությունը տևել է շուրջ մեկ ու կես տասնամյակ (IX դարի վերջին քառորդում), ըստ որում դրա մի զգալի մասը նա տիրապետել է գահին իր որդու՝ Մենուայի հետ համատեղ։ Իշպուինիի թագավորության ժամանակվանից սկսած արդեն հանդես է գալիս ուրարտերեն գիրը և մեզ հասել են արձանագրություններ՝ Ուրարտուի կյանքի այլևայլ բնագավառների մասին։

Իշպուինիի մեզ հասած արձանագրությունները թվով սահմանափակ են[12] և բացառապես շինարարական բնույթ ունեն։ Շինարարական օբյեկտների կառուցման տեղերն են Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան (Վան) ու նրա շրջակայքը (Ոսկերակ, Ծվաստան, Լեսկ), Արածանիի վերին հոսանքը (Բաղնոց)։ Իշպուինին գերազանցապես զբաղվել է երկրի պաշտպանության ամրապնդմամբ։ Ուստի նրա շինարարական գործունեության մեջ առանձնակի տեղ է գրավում պաշտպանական օբյեկտների՝ ամրոցների կառուցումը։

Թեև Իշպուինիի միանձնյա թագավորության ժամանակվանից ռազմաքաղաքական բնույթի ուրարտական արձանագրություններ չեն հասել մեզ, սակայն ասորեստանյան թագավոր Շամշի-Ադադ V-ի թողած գրավոր աղբյուրներից հայտնի է, որ Իշպուինիի օրոք Ուրարտուի տերիտորիան զգալի չափով ընդլայնվել էր հարավ-արևելյան ուղղությամբ։ Ահա թե ինչու Ուրմիա լճից հարավ ընկած Շուրդիրան (Մանալի կազմում, նրա հարավային ծայրամասում), որը մ. թ. ա. 823 թ. նվաճվում է Շամշի-Ադադ V-ի կողմից, համար-

---

10 Ալնիունու քաղաքի տեղը առայժմ պարզված չէ։ Լեման-Հաուպտը և Վ. Բելքը կարծում են, որ Սարդուրիի կառուցած պարսպի քարերը պետք է բերված լինեն հեռավոր վայրից՝ Վանա լճի վրայով Մանազկերտի շրջանից։ C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, II, 2. Berlin und Leipzig, 1931, էջ 19—20։

11 CICh, 1—2, տող 6—7։ УКН, 1—2, նույն տողերը։

12 Г. А. Меликишвили, УКН, 4—18.

վում է Ուրարտուի քաղաքը[13]։ Այնուհետև, մ. թ. ա. 822 թ. դեպի «Արևամուտի ծովը»[14] ձեռնարկած արշավանքի ժամանակ ասորեստանյան հիշյալ թագավորի զորահրամանատար Մուտարրիս-Աշշուրը նվաճում է Իշպուինիի[15] 11 ամրացված քաղաքներ՝ 200 շրջակա բնակատեղիների հետ միասին, իսկ վերադարձին, որպես հարկ, լծկան ձիեր է ստանում Նաիրյան թագավորներից։ Շատ հավանական է, որ այստեղ Շամշի-Ադադ V-ը նկատի է ունեցել Ուրմիա լճի արևելյան մասում ընկած տերիտորիաները և հատկապես Սուրի, Բարի մարզերը, որոնք իսկապես եղել են զարգացած ձիաբուծական կենտրոններ։

Իշպուինիի թագավորության օրոք արդեն Ուրարտուն ավելի ու ավելի լուրջ ախոյան էր դառնում Ասորեստանի համար։ Ահա թե ինչու Շամշի-Ադադ V-ին սոսկ մի անգամ է հաջողվում ներխուժել Ուրարտուի կենտրոնական մարզերից մեկը՝ Խուրուշկիա, որն ընկած էր Վանա լճից դեպի հարավ (Բոհտանի հովտում)։ Սակայն պետք է ենթադրել, որ այս արշավանքի արդյունքները ևս Ասորեստանի համար առանձնապես արդյունավետ չեն եղել, եթե նկատի ունենանք, որ ասորեստանյան զորքը ստիպված է լինում նահանջելու հարավ-արևելյան ուղղությամբ՝ Մանայի, Պարսուայի և Գիզիլբունդայի տերիտորիաներով[16]։

Շամշի-Ադադ V-ը հոր՝ Սալմանասար III-ի մահվանից հետո զգալի ջանքերի գնով, գուցե և Բաբելոնի աջակցությամբ, կարողանում է վերջ տալ թագավորական իշխանության դեմ ձեռնարկված ու տարիներ ի վեր շարունակվող երկպառակություններին և կրկին վերամիավորել Ասորեստանը։ Դրա շնորհիվ որոշ նախադրյալներ են ստեղծվում փոքրիշատե վերականգնելու պետության տնտեսական ու ռազմական նկատելիորեն խարխլված հիմքերը։ Սակայն Շամշի-Ադադը, այնուամենայնիվ, ի վիճակի չի լինում Ասորեստանին լիովին վերադարձնելու նրա երբեմնի հզորությունը։ Ի տարբերություն իր նախորդների, Շամշի-Ադադը այլևս հավակնություն չի ունենում Եփրատն անցնելու և իր հեգեմոնիան ապահովելու Ասորիքում[17]։ Ուրարտուն, ընդհակառակը, ապրում էր աննախընթաց վերելքի ժամանակաշրջան։

Իշպուինիի օրոք Ուրարտուի տերիտորիան հարավ-արևելյան ուղղությամբ արդեն զգալի չափով ընդլայնվել էր։ Ինչպես վերևում տեսանք, հենց իր՝ Շամշի-Ադադ թագավորի խոստոփանությամբ, Ուրմիա լճից դեպի հարավ ընկած Շուրդիրա քաղաքը, որն ավելի ուշ ժամանակներում հանդես է գալիս Մանայի կազմում, պատկանում էր Ուրարտուին։

Ուրարտուի քաղաքական պատմության մեջ, սակայն, առանձնակի աշխուժություն է նկատվում հատկապես այն ժամանակվանից, երբ Իշպուինին թագավորական գործերին մասնակից է անում իր որդուն՝ Մենուային։ Մեզ հասել են ոչ մեծաթիվ, սակայն զգալի արժեք ներկայացնող արձանագրություններ՝ Իշպուինիի և Մենուայի համատեղ թագավորության վերաբերյալ[18]։

---

13 И. М. Дьяконов, АВНИУ, 34.

14 Ենթադրվում է, որ պետք է լինի Կասպից ծովը։

15 Այստեղ Իշպուինին հիշատակվում է Ուշպինա ձևով։ Տե՛ս ARAB, I, § 717.

16 D. D. Luckenbill, ARAB, I, § 718, 719.

17 В. В. Струве, История древнего Востока էջ 306։ И. М. Дьяконов, Развитие земельных отношений в Ассирии, Л., 1949, էջ 84։

18 Г. А. Меликишвили, УКН, 19—27.

Իշպուինիի և Մենուայի միացյալ ջանքերով Ուրարտուի սահմանները ըսկըսում են ընդլայնվել և՛ հարավ-արևելյան, և՛ հյուսիսային ուղղությամբ։ Հարավ-արևելքում, օրինակ, նրանց նախ տեսնում ենք Արդինի-Մուսասիրում՝ Մեծ Զաբի (Տիգրիսի վտակի) վերին հոսանքի շրջանում, ուր երկրի նվաճումից հետո կառուցվում են պաշտամունքային օբյեկտներ և այդ առթիվ զոհաբերություններ մատուցվում ուրարտական աստվածներին[19]։ Իսկ այնուհետև Իշպուինիի և Մենուայի հաղթական արշավանքները է՛լ ավելի մեծ հաջողություններ են բերում Ուրարտուին։ Մուսասիրից հետո նրանք հետագայում հասնում են Մեհիշտա քաղաքը[20] և ապա ընդհուպ մինչև Դիալայի (Տիգրիսի վտակի) ակունքները, ուր նվաճում են Բարշուա (Պարսուա) երկիրը և մեծահարուստ ավարով վերադառնում Ուրարտու[21]։ Այսպիսով, Ուրարտուն մարտահրավեր է նետում Ասորեստանին՝ ընդհուպ մոտենալով նրա բուն տերիտորիային արևելքից։

Հյուսիսային ուղղությամբ ձեռնարկված արշավանքների ընթացքում Իշպուինին և Մենուան հասնում են մինչև Առաքս գետի վերին հոսանքները և նվաճում Ուիտերուխին, ապա էլ ավելի հյուսիսում՝ Լուշան և Կատարզան։ Նույնիսկ հյուսիսում ընկած էթիունյան հզոր ցեղային միության ակտիվ միջամտությունը ի վիճակի չի լինում խոչընդոտելու ուրարտական զորքերի հաղթարշավին։ Եվ այդ հաղթանակների արդյունքներն այնքան զգալի ու էական են լինում ուրարտական պետության համար, որ Իշպուինին և Մենուան անհրաժեշտ են գտնում այդ փաստը արձանագրելու միանգամից չորս սեպագիր հուշարձաններում[22]։

Այսպիսով, Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության ժամանակաշրջանում Ուրարտուն զգալի թվով նոր երկրներ ու ցեղային տերիտորիաներ է ներգրավել իր կազմում։ Այդ երկրներում իր տիրապետությունը վերջնականապես ապահովելու նպատակով ուրարտական իշխողները գործի են դնում ոչ միայն իրենց ռազմական հզոր մեքենան, այլև իր ժամանակին նրան համարյա չզիջող կրոնը։ Ահա թե ինչու աստիճանաբար ուրարտական պանթեոն են ներմուծվում նորանոր ցեղերի աստվածներ, որոնց շնորհիվ «ուրարտական» աստվածների ընդհանուր թիվն անցնում է 50-ից։ Դրանց կողքին գոյություն ունեին «երկրների», «լեռների», «լճերի», ինչպես նաև Արդինի (Մուսասիր), Կումենու, Տուշպա քաղաքների աստվածներ և այլն։ Ի դեպ, տարած աչքի ընկնող ռազմական հաղթանակների առթիվ Իշպուինին և Մենուան ուրարտական տաճարների պատվին աստվածներին մատուցում են համատարած զոհաբերություններ, որոնց մասին բավականաչափ մանրամասն պատմում է «Մհերի դռան» հայտնի պաշտամունքային արձանագրությունը[23]։

* * *

Ուրարտուն հսկայական առաջընթաց է ապրում ռազմա-քաղաքական տեսակետից հատկապես IX դարի վերջերից սկսած, այսինքն՝ Մենուայի (810—

19 ClCh, 12.

20 Մեհիշտան գտնվել է Ուրմիա լճից դեպի հարավ՝ Մանա և Պարշուա երկրների սահմանագլխին։

21 ClCh, 15.

22 УКН, 20—23.

23 УКН, 27.

786 ԹԹ. մ. թ. ա.) միանձնյա թագավորության ժամանակաշրջանում։ Երկրի պաշտպանունակությունը ապահովելու և հետագայում նրա տերիտորիան ընդլայնելու նպատակով Մենուան զբաղվում է ռազմական ամրոցների շինարարությամբ կենտրոնական և ծայրամասային մարզերում։ Վանա լճի շրջակայքում, օրինակ, նա կառուցում է բազմաթիվ ամրոցներ, որոնց մասին պատմում են Գյուղակում, Գործոտում, Անդաֆում, Կոխրանցում, Նոր գյուղում, Շուշանցում և Վարաղ-կիլիսայում հայտնաբերված արձանագրությունները[24]։ Ուրարտուի կենտրոնական մասում Մենուայի ձեռնարկած շինարարական աշխատանքներում առանձնահատուկ տեղ է գրավում շուրջ 80 կմ երկարությամբ ջրանցքը, որը ջուր է մատակարարում պետության մայրաքաղաքին՝ Տուշպային[25]։ Չնայած իր ավելի քան երկու և կես հազարամյա վաղեմությանը, այդ ջրանցքը մինչև օրս շարունակում է գործել։

Այնուհետև Մենուան իր ուշադրությունը սևեռում է հյուսիսային մարզերի վրա, ուր ամրոց-քաղաքներ է հիմնադրում նաև Արածանիի վերին հոսանքում (Մանազկերտ, Բագնոց)[26] և ապա Էրզրումի շրջանում (Դիլիբարա, Պասինլեր)[27] ու Արաքսի վերին հոսանքում (Բաշ-Ղալաղ՝ Դաշրուրունի մոտակայքում)[28]։

Ամրոցների կառուցումը, բնականաբար, Ուրարտուի համար հսկայական հնարավորություններ է ստեղծում ոչ միայն ամուր հաստատվելու նվաճված երկրներում և ապահովելու սեփական անվտանգությունը, այլև ռազմական արշավանքներ նախաձեռնելու և նորանոր երկրներ ու մարդեր ներգրավելու իր կազմի մեջ։

Դժբախտաբար մեզ չի հասել Մենուայի տարեգրության ամբողջական տեքստը։ Հայտնի են միայն նրա առանձին հատվածներ[29]։ Ուստի հնարավոր չէ պարզել Մենուայի քաղաքական նվաճումների ժամանակագրական կարգը։ Սակայն նկատի ունենալով Ուրարտուի արշավանքների ուղղությունները և նրա հակառակորդ երկրների տնտեսական ու ռազմական մակարդակը, կարելի է հանգել շատ թե քիչ ճշմարտացի եզրակացությունների։

Ուրարտուի հյուսիսային հակառակորդները (Էրիկուախի, Էթիունի, Դիաուխի) իրենց զարգացման ընդհանուր մակարդակով ավելի ցածր էին, քան արևմտյան ու հարավ-արևմտյան (Խատե, Իշալա կամ Իցալա, Ալզի, Ուլիրա, Մելիտեա և այլն) և հատկապես հարավ-արևելյան մրցակիցները (Մանա, Բարշուա և այլն)։ Էլ չենք խոսում այն մասին, որ հարավ-արևելքում ունեցած բախումների ժամանակ Ուրարտուն վերջին հաշվով գործ ուներ Առաջավոր Ասիայի առավել հզոր տերության՝ Ասորեստանի հետ։ Ուստի, Մենուայի թագավորության սկզբնական շրջանում ռազմական արշավանքները, բնականաբար, պետք է ուղղված լինեին դեպի հյուսիս, ուր նա գործ ուներ նվազ զարգացած ցեղերի ու ցեղային միությունների հետ, որոնց հասարակական կառուցվածքում նոր էին միայն առաջանում դասակարգային շերտավորման սաղմերը։

---

24 УКН, 66, 67, 71, 73, 77, 78, 91.

25 УКН, 43—56; Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, էջ 16—23։

26 УКН, 72. 4 Посл., 1.

27 УКН, 68, 69.

28 УКН, 70.

29 УКН, 28.

Այստեղ Մենուային տեսնում ենք նախ Արածանիի վերին հոսանքում՝ Մանազկերտի շրջանում, որտեղ նա ձեռնարկում է բազմաթիվ շինարարական աշխատանքներ (ոռոգող ջրանցքների անցկացում, պտղատու և խաղողի այգիների տնկում)[30]։

Այնուհետև Մենուան աստիճանաբար բարձրանում է դեպի հյուսիս՝ Արաքսի վերին հոսանքը, Ղարսի շրջանը և Ճորոխի ավազանը։ Հյուսիսում Մենուան հասնում է ընդհուպ մինչև բարձրանիստ Արարատի հյուսիսային փեշերը, Արաքսի աջ ափը, որտեղ նա նվաճում է Էրիկուախի երկիրը՝ Լուխիունի արքայական քաղաքով։ Թե որքան մեծ նշանակություն է տվել ուրարտական թագավորը դեպի հյուսիս ձեռնարկած իր այս ռազմական արշավանքին և հիշյալ տերիտորիայի նվաճմանը, կարելի է դատել թերևս այն փաստից, որ այդ հաղթանակի առթիվ նա թողել է մի ամբողջ շարք արձանագրություններ[31]։ Էրիկուախի երկրի նկատմամբ տարած հաղթանակը ամրապնդելու և Ուրարտուի նվաճողական արշավանքները հետագայում դեպի Արաքսի ձախափնյա հատվածը շարունակելու նպատակով ուրարտական թագավորը այդ երկրի տերիտորիայում՝ Արաքսի աջ ափին կառուցում է Մենուախինիլի քաղաք-ամրոցը[32]։

Հյուսիսում Ուրարտուի հաջորդ զոհը դառնում է Էթիունի ցեղային միությունը, որի լայնատարած տերիտորիան ձգվում էր Սարիղամիշի շրջանից մինչև Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերի մոտակայքը[33]։ Այստեղից ուրարտական թագավորը քշում է զգալի թվով խոշոր եղջերավոր անասուններ, ձիեր և այլն[34]։ Էթիունիի դեմ տարած հաղթանակը հսկայական չափով ամրապնդում է Ուրարտուի դիրքերը հյուսիսում ու զգալի նախադրյալներ ստեղծում նորանոր նվաճողական արշավանքների համար։

Է՛լ ավելի ուժեղ հակառակորդի հետ գործ ուներ Ուրարտուն հյուսիս-արևմուտքում՝ Էրզրումի շրջանից մինչև Ճորոխի ավազանը ձգված տերիտորիայում։ Այստեղ նա իր ուժերը չափում է Դիաուխի[35] հզոր ցեղային միության հետ և հաղթանակ տանում։ Դիաուխիի թագավոր Ուտուպուրշին անձնատուր է լինում և ծունկի դալիս Մենուայի առջև։ Վերջինս նրան ներում է շնորհում՝ հարկ վճարելու պայմանով։ Եվ, իսկապես, ուրարտական թագավորն այստեղ ստանում է ոսկի, արծաթ և այլն[36]։

Այսպիսով, Դիաուխի, Էթիունի, Էրիկուախի և այլ երկրների դեմ տարած հաղթանակը զգալի չափով ամրապնդում է Ուրարտուի դիրքերը հեռու հյուսիսում և ապահովում նրա թիկունքը թշնամական ոտնձգություններից։ Մենուան արդեն բավականաչափ հնարավորություններ է ձեռք բերում իր սահմանները ընդլայնելու նաև արևմտյան և հարավ-արևմտյան երկրների տերիտորիաների

---

30 Н. В. Арутюнян, Даиаала-тини, *ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1957, № 4, էջ 98—106։*

31 УКН, 30—34.

32 *Նույն տեղում, 70։*

33 Н. В. Арутюнян, Заглавные декларации урартских надписей и их значение при изучении вопросов топонимики, *ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1951, № 8. էջ 86—87։*

34 УКН, *38, տող 2—4։*

35 *Նույնական է ասորեստանյան արձանագրությունների Դայաենիի, անտիկ աղբյուրների Տաոխների, հայկական Տայքի և վրացական Տաոյի հետ։*

36 CICh, 27. УКН, 36. *Դիաուխի երկրի Շաշիլու արքայանիստ քաղաքի նվաճման մասին պատմում է նաև* УКН, *37 արձանագրությունը։*

հաշվին։ Այստեղ նա հաղթանակ է տանում Սուփանի (հայկական Ծոփք), Մելիտեա (հայկական Մալաթիա), Ուրմե[37], Ալզի (հայկական Աղձնիք), Խատե[38], Ուլիբա[39] և այլ երկրների նկատմամբ[40]։

Այսպիսով, հյուսիսային, արևմտյան և հարավ-արևմտյան մի ամբողջ շարք երկրների տերիտորիաների նվաճումը այն աստիճան ապահովում է Ուրարտուի հզորությունը, որ նա արդեն իրեն լրիվ նախապատրաստված է համարում վճռական ճակատամարտի բռնվելու է՛լ ավելի հզոր ախոյանների հետ հարավ-արևելքում։ Այստեղ պատերազմի թատերաբեմ է դառնում Մանա երկիրը, որի տերիտորիան ընկած էր Ուրմիա լճից դեպի հարավ և արևելք։ Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ոտնձգություններ անելով Մանայի լայնատարած տերիտորիայի նկատմամբ, Ուրարտուն վերջին հաշվով մարտահրավեր էր նետում Առաջավոր Ասիայի հզորագույն տերությանը՝ Ասորեստանին, քանի որ Մենուայի տիրապետության դեռևս սկզբնական շրջանում, երբ նա զբաղված էր հյուսիսային, արևմտյան ու հարավ-արևմտյան երկրների նվաճման հարցերով, Ասորեստանն արդեն երկու տարի շարունակ (807—806 թթ.) արշավանքներ էր ձեռնարկում Մանայի դեմ[41]։ Հետևաբար, հասկանալի է, որ Մանային տիրապետելու հարցում անխուսափելիորեն պետք է բախվեին Ուրարտուի և Ասորեստանի շահերը։

Եվ իսկապես, մի կողմից ուրարտական թագավոր Մենուան է կրկնակի հիշատակում իր տարած հաղթանակի մասին Մանայի նկատմամբ[42], մյուս կողմից՝ նրա ժամանակակից ասորեստանյան թագավոր Ադադներարի III-ը[43]։ Հասկանալի է, որ Մանան ժամանակ առ ժամանակ հանդիսացել է կովախնձոր այդ հզորագույն պետությունների միջև, ըստ որում ռազմական բախումները փոփոխակի հաջողություններ են բերել մերթ մեկ, մերթ մյուս կողմին։ Մի փոքր ավելի ուշ, որոշ ընդհատումներով (801 և 791 թթ. մ. թ. ա.), Ասորեստանը ռազմական արշավանք է ձեռնարկում Խուբուշկիայի դեմ[44]։ Սակայն Ուրարտուն, ըստ երևույթին, թեկուզ ժամանակավորապես կարողացել էր ընկնել Ասորեստանին և այն էլ ոչ միայն Մանային տիրապետելու հարցում։ Այդ երևում է հենց այն փաստից, որ դեպի հարավ-արևելք ձեռնարկած արշավանք-

---

37 Այս երկրի նվաճման մասին պատմում են Մուշում և Տրմերդում (Մուշի շրջանում) հայտնաբերված արձանագրությունները։ Ուրմեի Կուլմերի քաղաքը նույնական է ասորեստանյան աղբյուրների Նուպրիա երկրի Կուլիմմերիին։

38 Մենուան, ըստ երևույթին, նկատի ունի խեթերի այն մնացորդներին, որոնք պետության անկումից հետո հաստատվել էին Արածանիի և Եփրատի խառնարանից դեպի հարավ-արևմուտք, Մալաթիայից ոչ հեռու։

39 Նույնական է խեթական Ուլլիվիի և ասորեստանյան Ուլլիբայի կամ Ուլլուբայի հետ։ Համապատասխանում է այժմյան Խուլպին, որը գտնվում է Մուշից մոտավորապես 40—50 կմ դեպի հարավ-արևմուտք։ Տե՛ս Bedřich Hrozny, Naram-Sin et ses ennemis d'après un texte Hittite, „Archiv Orientalní", Praha, 1929, vol. I, № 1. էջ 68, E. Forrer, Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, 1921 (այսուհետև՝ PAR), էջ 85։ N. Adontz, նշվ. աշխ.։ էջ 196։

40 УКН, 28, 39, 40, 41.

41 Տե՛ս АВИНУ, 39 (ВДИ, 1951, № 2, էջ 305)։

42 CICh, 19—20; УКН, 28—29.

43 E. Schrader, KB, I, էջ 190։ И. М. Дьяконов, АВИНУ, 35. Այստեղ Մանան հիշատակվում է Մուշնու ձևով։

44 E. Forrer, PAR, էջ 40—48։ И. М. Дьяконов, АВИНУ, 39.

ներից մեկի ժամանակ Մենուային հաջողվում է հասնել ընդհուպ մինչև Ասորեստանի սահմանները[45]։

Այսպիսով, Մենուայի ռազմական նվաճումների շնորհիվ Ուրարտուն տարեցտարի ավելի ու ավելի գերիշխող տեղ է գրավում Առաջավոր Ասիայում։ Մենուայի թագավորության վերջին շրջանում արդեն (մ. թ. ա. VIII դարի սկզբին) Ուրարտուն հարավում և հարավ-արևելքում (Խուբուշկիա, Մանա) և արևմուտքում (Վերին Եփրատի ավազանում) ղդալի անախորժություններ է պատճառում Ասորեստանին։ Աստիճանաբար հավասարակշռվում են Ուրարտուի և Ասորեստանի ուժերը։ Վրա է հասնում Վանի թագավորության ծաղկման դարաշրջանը և նա նախապատրաստվում է ապագա է՛լ ավելի հուժկու ճակատամարտերի, որոնք արդեն բաժին են ընկնում Մենուայի հաջորդներին՝ Արգիշտի I-ին և Սարդուրի II-ին։

БИАЙНИЛИ-УРАРТУ В ПЕРИОД ВОЗВЫШЕНИЯ

Н. В. АРУТЮНЯН

(Резюме)

На основании данных урартских и ассирийских клинописных источников в статье рассматривается военно-политическая история Биайнили-Урарту в период его возвышения. Под указанным периодом подразумевается отрезок истории Урарту, продлившийся около одного века—начиная со времен правления Сардури I (30-е годы IX в. до н. э.) вплоть до конца царствования Менуа (первая четверть VIII в. до н. э.).

При Сардури I, вероятно, в значительной мере укрепились позиции Биайнили-Урарту на политической арене Передней Азии. Об этом свидетельствуют царская титулатура Сардури I («царь вселенной, царь, подчиняющий непокорных» и т. д.) и сведения ассирийских надписей о контрударах Сардури I Саламанасару III при попытках последнего проникнуть в западные, южные и юго-восточные пределы Урарту. Следует также учесть, что военные успехи Сардури I были обусловлены не только возвышением Урарту, но и внутренними неурядицами Ассирии.

Более крупных успехов достигло Ванское царство при царстве Ишпуини. В период его самостоятельного правления юго-восточные границы Урарту доходили до территорий к югу от Урмийского озера, а при совместном правлении Ишпуини и Менуа—вплоть до истоков реки Дияла (приток Тигра). На севере же Ишпуини и Менуа достигли верховьев реки Аракс (Унтерухи), а затем севернее их покорили области Луша и Катарза.

Дальнейшее усиление военной мощи Биайнили-Урарту происходит особенно при самостоятельном правлении Менуа (810—786 гг. до н. э.), который ведет завоевательную политику сразу в трех основных направлениях—на севере и северо-западе, западе и юго-западе, юго-вос-

[45] CICh, 19, վերին կողմը, տող 13։ УКН, 28, նույն կողմը և տողը։

токе. Границы влияния Биайнили-Урарту на севере и северо-западе при Менуа доходили до района Карса и бассейна Чороха, на западе и юго-западе — до заевфратских областей Мелитеа и Хате, на юго-востоке — до Манейского царства и даже до границ самой Ассирии, основного и грозного соперника Ванского царства.

К концу царствования Менуа силы Ассирии и Урарту на Переднем Востоке уравновешиваются. Наступает период расцвета Урарту, когда подготавливаются ожесточенные столкновения с Ассирией для обеспечения первенства в Передней Азии, которые имели место при преемниках Менуа—царей Аргиштти I и Сардури II.